ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Շրջակա միջավայրի նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «Գրասենյակային կահույքի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-19/11-2» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի ապրիլի 23-ին կնքված «ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-19/11-2» ծածկագրով պայմանագրում 2019 թվականի հունիսի 21-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության պատճառ՝	Ապրանքի մատակարարման ժամկետի երկարաձգում:
Փոփոխության նկարագրություն՝	Ապրանքի մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով՝ մինչև 2019 թվականի հուլիսի 30-ը:
Փոփոխության հիմնավորում՝	Պայմանագրի 8.5 և 8.6 կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Լիլիթ Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ **(011) 818-514:**

Էլ. փոստ՝ **gnumner.mnp@yandex.ru:**

Պատվիրատու՝ **Շրջակա միջավայրի նախարարություն:**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1

«23» ապրիլի 2019թ. N ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-19/11-2 պայմանագրի

ք.Երևան «21» «06» 2019թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ Վ.Ջիլավյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Սաքի» ՍՊԸ-ն, Ընկերության տնօրեն Հ.Կարապետյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 2019 թվականի ապրիլի 23-ին կողմերի միջև կնքված «ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-19/11-2» ծածկագրի պայմանագրի 8.5 և 8.6 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2019 թվականի ապրիլի 23-ին կնքված «ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-19/11-2» ծածկագրով պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1.1. «բնապահպանության» բառը փոխարինել «շրջակա միջավայրի» բառերով,

1.1.2. ապրանքի մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով՝ մինչև 2019 թվականի հուլիսի 30-ը:

2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Սաքի» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք. Գորիս, Անկախության 2/31
ՖՆ գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
ՀՀ 900011023281	ՀՀ 1510019341900100
ՀԿՀՀ 02507198	ՀԿՀՀ 09213482
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի ժ/պ	«Սաքի» ՍՊԸ-ի տնօրեն
Վ.Ջիլավյան	Հ.Կարապետյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.